ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/211

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9977-2022 գրությամբ «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 26.05.2022թ. թիվ 08-139 գրության հիման վրա 31.05.2022թ. թիվ 26/26-1/9977-2022 գրությամբ նախաձեռնել է «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից հայտարարված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը:

Պատվիրատուն 2-րդ և 6-րդ չափաբաժինների մասով մեր հայտը բավարար է գնահատել (պահանջվում է մեկ միավորը 10 հատ մենք առաջարկել ենք 12 հատ) ենթադրում եմ այն պատճառով, որ առավելություն է դիտարկել բժշկի համար: Նույն կերպ բժշկի համար առավել հարմար կարող էր լինել ասեղի մեր առաջարկված չափը:

Երբ պատվիրատուն շտկում է պահանջել, մենք շտկել ենք ինչը հնարավոր է եղել, իսկ 18-րդ չափաբաժնի մասով արտադրողը չի պարտավորվել փոխել իր ստանդարտ արտադրատեսակը ըստ պատվիրատուի պահանջի և մենք հրաժարվել ենք փոխել բնութագիրը և ուղարկել ենք նույն ձևով հետ պատվիրատուի էլ. փոստի հասցեին սահմանված ժամկետներում այդպիսով չխոչընդոտելով գնումների գործընթացի բնականոն ընթացքը:

Ցանկանում ենք Ձեզ տեղեկացնել, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմված տեխնիկական բնութագրերը մեծամասամբ ուղղորդված են կոնկրետ ապրանքատեսակ գնելու համար:

Դրա վկայությունն է տեխնիկական բնութագրի մեջ այնպիսի բնութագրերի առկայությունը, որը որևէ կերպ չի կարող ազդել ապրանքի լավ, կամ վատ լինելու վրա:

Մեր կողմից առաջարկվող վիրաբուժական թելերը համաշխարհային ճանաչում վայելող բրենդի արտադրանք են, որոնց որակը հայտնի է ոչ միայն ՀՀ-ում այլև ամբողջ աշխարհում»:

«Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/211 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.05.2022թ. թիվ 08-139 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Գլոբալ Մեդիքլ Թրեյդինգ» ՍՊԸ-ին ներառելու նպատակով Ձեզ ենք տրամադրում հետևյալ տեղեկությունները:

Բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 13.04.2022թ. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարել է ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև Ընթացակարգ):

Ընթացակարգին տարբեր չափաբաժիններով մասնակցել է նաև «Գլորալ Մեդիքլ Թրեյդինգ» ՍՊԸ-ն: Հայտերի գնահատման նիստին գնահատող հանձնաժողովը Մասնակիցների հայտերում արձանագրել է անհամապատասխանություններ, որից հետո նիստը կասեցվել է և մասնակիցներին տրվել հայտերում առկա անհամապատասխանությունների շտկման հրավերով նախատեսված հնարավորությունը: Բոլոր ընկերությունները, այդ թվում նաև «Գլոբալ Մեդիքլ Թրեյդինգ» ՍՊԸ-ն, շտկել են անհամապատասխանությունները բացառությամբ 18-րդ չափաբաժնով Ընկերության առաջարկած տեխնիկական բնութագրերի: 18-րդ չափաբաժնով նախատեսված է «Վիրաբուժական թել 5.0» ապրանքը, իր համապատասխան տեխնիկական բնութագրերով: Մասնակցի ներկայացրած տեխնիկական ցուցանիշներում գնահատող հանձնաժողովը արձանագրել էր ասեղի չափի անհամապատասխանություն հրավերի պահանջներին, ինչը ընկերությունը չի շտկել, ուստի Ընկերության հայտը տվյալ չափաբաժնով գնահատվել է անբավարար և մերժվել: Այդպիսով Ընկերությունը խախտել է հայտով ստանձնած պարտավորություն:

Կից ներկայացնում ենք Ընթացակարգի հրավերի, գնահատող հանձնաժողովի թիվ 2 և 3 նիստերի արձանագրությունների, Ընկերության հայտով ներկայացրած 1,1 հավելվածի, ինչպես նաև շտկված 1.1 հավելվածի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/211 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/211 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/211 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.05.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն հավելված 1-ում իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը ներկայացրել է կայքի հետևյալ հղմամբ՝ «www.e-register.am/companies/1306710», սակայն այն տվյալները համարվում է բացակայող: Բացի այդ, հավելված 1.1-ով առաջարկված ապրանքների ամբողջական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ: Մասնավորապես 3, 10, 12, 13, 18, 19, 20 և 22-րդ չափաբաժինների ցուցանիշներում ներկայացված ասեղների երկարությունները չեն համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

3. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից 18-րդ չափաբաժնով արձանագրված անհամատասխանությունը չի շտկվել և առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրում ասեղի չափը չի համապատասխանում հրավերի պահանջներին և որոշում կայացրել 18-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9977-2022 գրությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 26.05.2022թ. թիվ 08-139 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը</u>***, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպես, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.05.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն հավելված 1-ում իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը ներկայացրել է կայքի հետևյալ հղմամբ՝ «www.e-register.am/companies/1306710», սակայն այն տվյալները համարվում է բացակայող: Բացի այդ, հավելված 1.1-ով առաջարկված ապրանքների ամբողջական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ: Մասնավորապես 3, 10, 12, 13, 18, 19, 20 և 22-րդ չափաբաժինների ցուցանիշներում ներկայացված ասեղների երկարությունները չեն համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից 18-րդ չափաբաժնով արձանագրված անհամատասխանությունը չի շտկվել և առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրում ասեղի չափը չի համապատասխանում հրավերի պահանջներին և որոշում կայացրել 18-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմանագրի նախագծի Հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, 18-րդ չափաբաժնով ***ասեղի երկարությունը սահմանվել է <u>17մմ</u>:***

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն 18-րդ չափաբաժնի համար ինչպես հայտով ներկայացված Հավելված N 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, այնպես էլ շտկման արդյունքում ներկայացված տեխնիկական բնութագրով ***ասեղի երկարությունը նշել է <u>15մմ</u>:***

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ վերը նշված անհամապատասխանությունը՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջի նկատմամբ, հանգեցրել են Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման

ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ գտնում եմ, որ «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից գրությամբ վկայակոչված այն դիտարկմանն, որ Պատվիրատուն 2-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Ընկերության հայտը բավարար է գնահատել (պահանջվում է մեկ միավորը 10 հատ Ընկերությունն առաջարկել է 12 հատ) ենթադրվում է այն պատճառով, որ առավելություն է դիտարկվել բժշկի համար: Նույն կերպ բժշկի համար առավել հարմար կարող էր լինել ասեղի Ընկերության առաջարկված չափը, ապա հարկ եմ համարում արձանագրել, որ սույն ընթացակարգը Պատվիրատուի կողմից նախաձեռնվել է Ընթացակարգի 18-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտը չհամապատասխանելու և արդյունքում մերժվելու հիմքով, հետևաբար Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը քննության առարկա է դարձրել և արձանագրել է Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակում թույլ տրված խախտումը միայն 18-րդ չափաբաժնի մասով:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով Ընկերության կողմից գրությամբ վկայակոչված այն դիտարկմանն, որ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմված տեխնիկական բնութագրերը մեծամասամբ ուղղորդված են կոնկրետ ապրանքատեսակ գնելու համար և որ դրա վկայությունն է տեխնիկական բնութագրի մեջ այնպիսի բնութագրերի առկայությունը, որը որևէ կերպ չի կարող ազդել ապրանքի լավ, կամ վատ լինելու վրա, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ տվյալ փուլում

հնարավոր չէ վիճարկել հրավերի տեխնիկական բնութագրի պահանջները, այն կարող է վիճարկվել միայն Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետում, այն է՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9977-2022 գրությամբ «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գլոբալ Մեդիքալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**